ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

giz

Co-financed by Schweizerische Eidgenossenschaft Confédération suisse Confederazione Svizzera Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Հավելված 1

Ծրագրային հայտ-առաջարկ

ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամ ՄԱԿ-ի 2030 Օրակարգի և Կայուն զարգացման նպատակների տեղայնացում համայնքներում

1.	**Հայտատու համայնք(ներ)**	Քաջարան համայնք
2.	**Համայնքի ղեկավարի[1] տվյալներ** *(անուն, ազգանուն, բջջ. հեռ., էլ. փոստի հասցե)*	Մանվել Փարամազյան, 077844844 paramazyan1977@mail.ru
3.	**Տնտեսական զարգացման պատասխանատուի[2] տվյալներ** *(անուն, ազգանուն, բջջ. հեռ., էլ. փոստի հասցե)*	Գարեգին Գաբրիելյան, 094629499 garegin8gabrielyan@gmail.com
4.	**Հայտի ներկայացման ամսաթիվ**	17 մայիսի 2023թ.
5.	**Ծրագրի անվանում**	**Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների ձեռք բերում**

[1] Միջհամայնքային ծրագրի դեպքում նշել մասնակցող բոլոր համայնքների ղեկավարներին:

[2] Միջհամայնքային ծրագրի դեպքում նշել մասնակցող բոլոր համայնքների տնտեսական զարգացման պատասխանատուներին:

6.	**Ծրագրի նպատակը և խնդիրները**	**Ծրագրի նպատակը** **Համայնքի գյուղատնտեսության զարգացումն ու ընդլայնումը՝ նպաստելով հողերի օգտագործման արդյունավետության ու ագրոբիզնեսի արտադրողականության բարձրացմանը:** Ծրագրի խնդիրները 1. Մինչև 2030թ. հողերի բերքատվության բարձրացնել 50% -ով 2. Մինչև 2030թ. մշակվող վարելահողերի մակերեսը ընդլայնել 50% -ով 3. Մինչև 2030թ. շահագործվող խոտհարքերի մակերեսը ընդլայնել 50% -ով Թիրախային խմբերը 1. Լեռնային և բարձր լեռնային գյուղերի գյուղացիական փոքր տնտեսությունները 2. Լեռնային և բարձր լեռնային գոտու անասնապահական ագարակները (ֆերմերները) Շահառու խմբերը, այդ թվում՝ Անմիջական շահառուները • *Լեռնային և բարձր լեռնային գյուղերի գյուղացիական փոքր տնտեսությունները* • *Անասնապահությամբ զբաղվող ֆերմերները* Այլ շահառուներ • *Համայնքի բնակչությունը* • *Համայնքապետարանը* • *Համայնքի գյուղատնտեսության ոլորտում պոտենցիալ ներդրողները*

7.	**Ծրագրի ընդլայնված նկարագրություն**	**Ծրագրի հիմնախնդիրն ու դրա կարևորությունը** Քաջարան համայնքը 2017թ. խոշորոցումից հետո ընդգրկում է 20 գյուղական բնակավայր, որոնցից 17-ը լեռնային ու բարձր լեռնային փոքր գյուղեր են: Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերից 167 հա վարելահող է, 665 հա-ը՝ խոտհարք: 167 հա վարելահողից մշակվում է ընդամենը 45%-ը, իս խոտհարքներից օգտագործվում է 25 %-ը: Աճեցվող հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերը ՝ կարտոֆիլ, լոբի (մշակվող ցանքատարածությունների 90%-ը): Քիչ քանակությամբ, առավելապես ընտանեկան սպառման համար, մշակվում են նաև բանջարաբոստանային կուլտուրաներ: Ցածր է նաև միջին բերքատվությունը: Օրինակ՝ կարտոֆիլի բերքատվությունը 2-2,5 անգամ ցածր է հանրապետական միջինից: Անասնապահությունը ևս ցանկալի մակարդակում չէ. խոշոր եղջերավորների գլխաքանակը՝ 260, մանր եղջերավորներինը՝ 2000, այն դեպքում, երբ առկա արոտավայրերի ու խոտհարքերի մակերեսները հնարավորություն են տալի բազմակի անգամ ավելացնել անասնապահության ծավալները: Իրավիճակի գնահատումն ու գյուղացիների շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ վերը նշված իրավիճակի պատճառներից է նաև գյուղատնտեսական մեքենաների սակավությունն ու որոշ տեսակների՝ բացակայությունը: Լեռնային բարդ, կտրտված ռելիեֆով տարածքում անհամեմատ դժվար ու բարդ է հողի մշակման աշխատանքը, և հատկապես երիտասարդները դժվարությամբ են կապում իրենց ապագան գյուղատնտեսության հետ: Արդյունքում՝ դատարկվող լեռնային, նաև սամանապահ գյուղեր, համայնքի տնտեսության առավել բևեռացում, պարապ մնացող հողեր, աղքատության խորացում: **Ծրագրի կապը Օրակարգ 2030 բաղադրիչների հետ** Տնտեսական բաղադրիչ • Գյուղացիական տնտեսությունների և անասնապահական ֆերմաների արտադրողականության բարձրացում • Հողի բերքատվության ավելացում • Բերքի (պարենային և կերային) կորստի նվազում • Շահագործվող վարելահողերի և խոտհարքերի մակերեսի ավելացում • Մասնավոր հատվածի հետ համագործակցության հնարավորությունների ավելացում

		• Գյուղացիական տնտեսությունների համար հասանելի և մատչելի տեխնիկական ծառայությունների հնարավորություն Սոցիալական բաղադրիչ • Կբարելավվի բնակիչների պարենային ապահովվածությունը • Գյուղացիների եկամտի ավելացում • Ծանր գյուղատնտեսական աշխատանքների նվազեցում, ինչը զգալի կլինի հատկապես կանանց և հաշմանդամություն ունեցող գյուղացիների համար Էկոլոգիական բաղադրիչ • Հողի մեքենայացված և տեխնոլոգիապես ճիշտ պարարտացումը կնվազեցնի հողի և ստացվող բերքի քիմիական աղտոտման ռիսկը • Հողի մեքենայացված հերկումը , հատկապես թեք լանջերի վրա, կնվազեցնի հողի դեգրադացիայի և էրոզիզիայի ռիսկը

8.	**Ծրագրի կապը 2030 Օրակարգի և կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) հետ**	**ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿ 2** **ՎԵՐԱՑՆԵԼ ՍՈՎԸ, ՀԱՍՆԵԼ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՍՆՈՒՑՄԱՆ, ԽԹԱՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ** ➢ **ԿԶՆ թիրախ** 2.3 Մինչև 2030թ. կրկնապատկել փոքր պարենարտադրողների, մասնավորապես կանանց, տեղաբնիկ ժողովուրդների, ընտանեկան գյուղացիական տնտեսությունների, անասնապահների և ձկնորսների գյուղատնտեսական արտադրողականությունը և եկամուտները, այդ թվում՝ հողի, այլ արտադրական ռեսուրսների և ներդրումների, գիտելիքների, ֆինանսական ծառայությունների, արժեքի ավելացման և շուկաների հնարավորությունների և ոչ գյուղատնտեսական զբաղվածության ապահով և հավասար հասանելիության միջոցով *ԿԶՆ ցուցանիշ* *2.3.1 Մեկ աշխատանքի միավորին ընկնող արտադրության ծավալը ըստ գյուղատնտեսական/ անասնապահական/անտառտնտեսության ձեռնարկությունների չափի դասերի* *2.3.2 Փոքրածավալ մթերք արտադրողների միջին եկամուտը ըստ սեռի և տեղաբնիկ լինելու կարգավիճակի* ➢ **ԿԶՆ թիրախ** 2.4 Մինչև 2030թ. ապահովել պարենարտադրության կայուն համակարգեր և ներդնել դիմակայուն գյուղատնտեսական գործելաձևեր, որոնք մեծացնում են արտադրողականությունը և արտադրությունը, օգնում են պահպանել էկոհամակարգերը, ուժեղացնում են կլիմայի փոփոխություններին, ծայրահեղ եղանակային պայմաններին, երաշտին, հեղեղներին և այլ աղետներին հարմարվելու կարողությունները և շարունակաբար բարելավում հողի որոկը *ԿԶՆ ցուցանիշ* *2.4.1 Արդյունավետ ու կայուն գյուղատնտեսական գործելաձևեր կիրառող գյուղատնտեսական տարածքների համամասնությունը*

9.	**Ակնկալվող արդյունքներ** *(այդ թվում՝ ազդեցությունը այլ ոլորտների վրա և միջանկյալ արդյունքներ, օր.՝ ժամանակավոր աշխատա-տեղեր ծրագրի իրականացման ընթացքում)*	• Գյուղացիները կստանան նոր և ավելի որակյալ տեխնիկական ծառայություններ ստանալու հնարավորություն • Համայնքապետարաը հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու հնարավորություն կստանա • Մշակվող վարելահողերի մակերեսը 50%-ով ավելացնելու հնարավորություն • Հողերի բերքատվությունը 50%-ով ավելացնելու հնարավորություն • Գյուղատնտեսության ոլորտում նոր ներդրումներ ներգրավելու կարողություններ կավելանան • 12 լեռնային և բարձրլեռնային գյուղերի գյուղացիական տնտեսությունները արտադրողականությունը բարձրացնելու հնարավորություն կստանան • Կբարելավվի համայքի բնակիչների պարենային ապահովվածությունը • Կբարելավվի անասնապահության կերային ապահովվածությունը
10.	**Հայտի մշակման գործընթացի մասնակիցներ և ծրագրի իրականացման դերակատարներ**	• Ծրագրային միջոցառումը ներառված է համայնքի զարգացման հնգամյա (2023-2027թթ) ծրագրում և 2023թ. աշխատանքային պլանում: Հնգամյա ծրագրի և աշխատանքային պլանի հաստատումը ուղեկցվել է հանրային քննարկումներով, այդ թվում՝ վարչական ղեկավարների կողմից գյուղական բնակավայրերում կազմակերպված: • Դրամաշնորհային ծրագրային հայտը քննարկվել է նաև համայնքի ղեկավարին կից համայնքի բյուջեի, հնգամյա զարգացման և այլ ծրագրերի կառավարման խորհրդակցական մարմնում: • Հայտի մշակման գործընթացը համակարգել է համայնքապետարանի տնտեսական զարգացման պատասխանատուն: • Համայնքի ավագանին իր 17.05.2023թ № որոշմամբ համաձայնություն է տվել դմամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորում ապահովելու առաջարկին:
11.	**Ծրագրի տևողությունը**	Վեց ամիս
12.	**Իրականացման վայրը**	Քաջարան համայնք
13.	**Ծրագրի ընդհանուր արժեքը**	18,6 մլն դրամ

14.	**Հայտավորվող ֆինանսական միջոցներ**	16,0 մլն դրամ
15.	**Բնեղեն ներդրման նկարագրությունը (առկայության դեպքում)**	---
16.	**Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանք մեղմող միջոցառումները**	1. Գնաճ, արտարժույթի փոխարժեքի տատանում → Չնախատեսված ծախսերը ծածկելու համայնքի պատրաստակամություն
17.	**Գալիք 3-5 տարում ծրագրի կենսունակությունն (ֆինանսական, ինստիտու-ցիոնալ) ապահովող միջոցառումները**	1. Մեքենա-տրակտորային կայանի ստեղծում 2. Ավագանու կողմից ՄՏԿ կառավարման, առկա և ձեռք բերվող տեխնիկայի օգտագործման կարգի սահմանում 3. Համայնքի ՋՀԾ-ում, ՏԱՊ-ում, ՄՋԾ-ում ՄՏԿ-ի կառավարման, տեխնիկային պահպանման և շահագործման նպատակով միջոցառումների և ֆինանսական միջոցների նախատեսում
18.	**Լրացուցիչ խորհրդատվության նկարագրություն**	----
19.	**Լրացուցիչ տեղեկություններ և տվյալներ (առկայության դեպքում)**	----

Ծրագրի գործողությունների պլանը[3]

hh	Միջոցառում	2023						2024						
		7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7
1.	Գնման գործընթացի նախապատրաստում													
2.	Մրցույթի կազմակերպում													
3.	Ձեռք բերման/պայմանագրի կատարման ընթացք													
4.	Նախատեսված ապրանքների ընդունում													

Քաջարան համայնքի ղեկավար՝ **Մ. Փարամազյան**

[3] Յուրաքանչյուր միջոցառման իրականացման ժամանակահատվածը ներկել ամիսներով:

Ծրագրի գործողությունների պլանը[3]

hh	Միջոցառում	2023						2024						
		7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7
1.	Գնման գործընթացի նախապատրաստում													
2.	Մրցույթի կազմակերպում													
3.	Ձեռք բերման/պայմանագրի կատարման ընթացք													
4.	Նախատեսված ապրանքների ընդունում													

Քաջարան համայնքի ղեկավար՝ **Մ. Փարամազյան**

[3] Յուրաքանչյուր միջոցառման իրականացման ժամանակահատվածը ներկել ամիսներով: